# ԵՐԿԱՐԱՁԳՎԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆԻ ԱՐՏՈՆԱԳՐԻՆ ԵՎ ՎԿԱՅԱԿԱՆԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ

30.04.2018 18:55

***Հարգելի փաստաբաններ,***

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 01.03.2018թ. թիվ 106-Լ որոշմամբ «**Փաստաբանի արտոնագիր և վկայական տրամադրելու» կարգում** (**այսուհետ՝ Կարգ**) կատարված փոփոխություններով սահմանվել է **փաստաբանի արտոնագրին և վկայականին փոխարինող պլաստիկ քարտի** տրամադրման կարգը:

2018 թվականի մարտի 1-ի դրությամբ գործող փաստաբանական գործունեության արտոնագիր ունեցող փաստաբանների համար Կարգով սահմանվել է փաստաբանի արտոնագրին և վկայականին փոխարինող պլաստիկ քարտն անվճար ստանալու հնարավորություն՝ Կարգով սահմանված ժամկետում դիմում ներկայացնելու դեպքում:

**ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 30.04.2018թ. թիվ 199-Լ որոշմամբ 01.03.2018թ. դրությամբ գործող փաստաբանական գործունեության արտոնագիր ունեցող փաստաբանների կողմից արտոնագրին և վկայականին փոխարինող պլաստիկ քարտ ստանալու դիմումը ներկայացնելու համար Կարգով սահմանված ժամկետը ԵՐԿԱՐԱՁԳՎԵԼ Է ՄԻՆՉԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ը ՆԵՐԱՌՅԱԼ:**

Պլաստիկ քարտ ստանալը փաստաբանին չի զրկում իր վկայականը և արտոնագիրը զուգահեռ օգտագործելու իրավունքից:

**Բեռնել «Փաստաբանի արտոնագիր և վկայական տրամադրելու» կարգը.**

**** Կարգի վերջին ինկորպորացիան՝ 30.04.2018թ. դրությամբ***

**Բեռնել փաստաբանի արտոնագրին և վկայականին փոխարինող պլաստի քարտ ստանալու մասին դիմումի ձևաթուղթը.**

## Առաջարկվող նորություններ

**02.03.2018**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐՆ ԱՅՍՈՒՀԵՏ ԿԱՐՈՂ ԵՆ ՈՒՆԵՆԱԼ ՓԱՍՏԱԲԱՆԻ ԱՐՏՈՆԱԳՐԻՆ ԵՎ ՎԿԱՅԱԿԱՆԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏ

**14.07.2018**ՓԱՍՏԱԲԱՆԻ ԱՐՏՈՆԱԳՐԻՆ ԵՎ ՎԿԱՅԱԿԱՆԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏԸ ՓԱՍՏԱԲԱՆԻՆ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ Է

ԱՆՎՃԱՐ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })